

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԷԶԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ

#### ՍԱՐԿԱՒԱԳ ԲԵՐԴԱԿՑԻ

13-16-րդ դարերը Հայ ժողովրդի պատմության յուզիչ եւ մոայլ ժամանակաշրջանն են կազմում: Դեռ 13-րդ դարի առաջին կեսին Մոնղոլական դաժան եւ տնտեսիկ կոտորածները, իսկ 14-րդ դարում Լենկթեմուրի սոսկալի աղէտարեր արւաւանքները միանգամայն քայքայում են Հայ ժողովրդի խաղաղ ու երջանիկ կեանքը: Սակայն, չնայած Մոնղոլական եւ Լենկթեմուրեան վայրագութիւններին ու աւերածութիւններին Հայ ժողովուրդն երբէք չի ընդհատում եւ, ո՛չ էլ կանգ է առնում նրա մշակութային կեանքը:

Նոյն 13-16 դարերում Հայ գրականութեան պատմութեան համար սկսում է մի նոր եւ ուշադրաւ չըլնան: Պատմաչրջանի նշանակալից մի երեւոյթն այն է, որ դեպարտեստական գրականութեան մէջ ծածանում է Հայ աշխարհիկ ընդունի դրօշը: Այդ հանգամանքն են, հաստատում հին ձեռագրերից յայտնաբերուած Հայ միջնադարեան ժողովրդական քանահիւսութեան մէջ ուրոյն տեղ դրաւող քնարական եւ պանդխտութեան երգերն ու առակները եւ մի շարք տաղանդաւոր բանաստեղծների ստեղծագործութիւնները: Այդ պայծառ կերպարներից Հայ պրականութեան պատմութեան մէջ տաղանդաւոր եւ առանձնաշատուկ տեղ են գրաւում Ճիրիւլ, Կոստանդին Նորիկացին, Յովհաննէս Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամարցին, Նահապետ Քուչակը եւ ուրիշներ, որոնք երդել են աշխարհիկ մօտիւններով, ժողովրդին խօսակցական լեզուով եւ հարս-

տացրել են ժամանակի պրականութեան պանծարանը:

Այնուհետեւ, 16-րդ դարի վերջում եւ 17-րդ դարի առաջին շրջանում հանդէս են գալիս նոր բանաստեղծներ, որոնց մէջ իր համեմատ էջն ունի Սարկաւազ Բերդակցին, որի մասին, սակայն, կենսագրական տեղեկութիւններ չկան, ո՛չ էլ նրա իսկական աւանանագրանունն է յայտնի:

Տաղարանից մեկ հասել է միայն մի տանաւոր, որից պարզում է, որ նա եղել է իր ժամանակի առաջադէմ ու լուսաւոր հոգեւորականներից մէկը, ունեցել է սարկաւազի աստիճան եւ բնիկ Բերդակցի է, ինչպէս ինքն է յիշատակում իր տաղի վերջում. «Ո՛վ սարկաւազ Բերդակցի»:

Բերդակցու ստեղծագործութիւններից մինչեւ օրս հրատարակուել է միայն մի տաղ: Դա «Գովասանութիւն խաղողայ, բաժակի եւ վասն ուրախութեան» խորագրով պոեմաւորն է, որն ուշադրաւ է ո՛չ միայն իր ծոր թրփանդակութեամբ, այլեւ իր լեզուական յատկանիշով:

Սարկաւազ Բերդակցին, արդէս իր դարաշրջանի գիտակից եւ պայծառ իշմբերից մէկը, խորապէս հասկացել է իր ժամանակի հրամայողական պահանջը եւ իր տաղը գրել է ժողովրդին հասկանալի, աշխարհիկ լեզուով, որին առանձին գեղեցկութիւն են առիւս պարզ, յստակ ձեւը եւ ժողովրդական բանահիւսութեան պատկերաւոր արտայայտութիւններն ու համեմատութիւնները: Այնուհետ Բերդակցին հարազատ պոյններով պատկերել է ե գովաբանել խաղողի հմալքն

ու փեհութիւնը: Նա արձանագրել է ու թէ խաղողն ճանաչութեան պտուղն է» եւ ճամբէն պողոտ թաղաւորը» որի գուլալ հասիկները ասկի թելի վրայ շարուած մարդարիտնէր են»: Այնուհետեւ Բերդակցիէն աւելի խորացնելով իր տաղի բովանդակութիւնը, պատմել է, թէ ինչպէ՛ս են դիմի պատրաստում: Նա ընդգծել է, թէ երբ խաղողը քաղում. լցնում են հնձանում, ճրմում են եւ «վարդի նման ջուր է բխում»: Այդ անմահական ջուրը լցնում են կարասը, ուր ճառանջ կրակի եւ է դախա»: Իսկ երբ թաղաւորներն ու մեծ իշխանները ժողովում են դիմու շուրջը, ճրլորի սիրտն է բանում»: Բայց երբ աղքատն է խմում, նա աշխարհի տէր ու տիրակալն է դառնում. երբ կոյրն է կոնծում, պատմում է ամպխիս քաղաքների մասին, որոնց նա երբէք չի տեսել, իսկ երբ մունջն է խմում, թութակի նման յեզու է առնում:

Սաեկայն, Սարկաւադ Բերդակցին, իբրեւ Հոգեւորական, չի կարողացել ազատ երգել, ուստի իրեն արդարացրել է, թէ ինք երգել է ո՛չ թէ զինու, այլ պատարագի «բաժակը»։ Այդ պատճառով էլ իբր ասդի վերջում իր իսկական անուն-ազգանունը չի յիշատակել, ալ միայն գրել է. «Սարկաւադ Բերդակցի», իսկ մի այլ ձեռագրում՝ «Հայ սարկաւադ»։

Մարկաւազ Բերդակցու արժէքաւոր տաղը լեւոն Մինասեանը, ՎՄԻ քանի տաղ Յովհաննէս Թլկուրանցուց՝ խորաշրջով յօդւածում (ՎՄԻոն), թիւ 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր) վերադրել է Յովհաննէս Թլկուրանցուն, այսպիսի հաւանական տողերով. «... Տաղաբանի մասին խօսելիս իշխել ենք, այնտեղ կան այլ երգեր եւ, որոնց հեղինակի անունները չկան. այդ երգերից հինգն եւս բերում ենք ստորեւ, որոնցից չառ հաւանաբար երկուսը՝ համար 2-ն եւ 4-ը, պատկանում են Թլկուրանցուն: Ասոնք ալ դեռ եւս ստուգումների կարօտ են»:

Արժանազգինք, որ Հեռոն Մինասեանի «Հասանակին» ենթադրութիւնն որեւէ հիմք չունի եւ միանշանակօք սխալ է: Իրականութիւնն այն է, որ «Սիւն»-ում տպուած «Տաղ ուրախութեան ի վերայ խաղողին» ո-

տանաւորը չի պատկանում Յովհաննէս Թլկուրանցու գրչին, այլ զա տաղարան Սարկաւազ Բերդակցու ստեղծագործութիւնն է, որը յայտնի բանասէր-մանկավարժ Կարապետ Կոստանեանը 1617 թուականին գրուած ձեռագիր մատենանից յայտնաբերելով առաջին անգամ հրատարակել է իր «Մէլիգարեան» տաղերգունին՝ խորագրով գրքում։ Այնուհետեւ, 1910 թուին, Վրթանէս Փափաղեանը նոյն տաղը լրիւ է յնծայել իր «Պատմութիւն Հայոց գրականութեան» գրքում (Թիֆլիս), իսկ Մանուկ Աբեղեանը ապագրել է իր «Պատմութիւն Հայոց հին գրականութեան» դրքում (1940 թ., Երեւան)։ Մեր գրական արխիւում է գտնուում նաեւ 1630 թուականին գրուած մի ձեռագիր տաղարան, որի 75-րդ էջը զարդարում է նոյն տաղը եւ Կոստանեանի հրատարակած ոտանաւորից մի քանի բառերով է տարբերում։

«Վրին»-ում Ղևոնդ Մինասեանի հրատարակած տաղի հիմնական թերիները սրբազրելու եւ հարազատութիւնը վերականգնելու նպատակով՝ մեր ձեռագիր մատենային Սարկաւազ Բերդակցու տաղն այստեղ առանձն բերենք, որ իր ամբողջութեամբ ներկայացնում է հետեւեալ պատկերը.

Խաղճ՝ գինգ գովել պիտի,  
 Բոլոր պտղովդ ես հաւասար.  
 Զի դու միայն ես գեղեցիկ,  
 Ամէն պտղոց թաւն ու բովար:

Թեկիդ քաշուած է յոսկւոյն մէջէն,  
Դու մարգարիտ ոսկի շարած,  
Քո մէկ պտուղդ ամէ գնուհար,  
Տաղարիոն ակն ու գռհար:

Ազգ մի թուխ, ազգ մի սպիտակ,  
Ազգ մի կարմիր, որ լուս կուտար.  
Ազգ մի դեղին խունկի նման,  
Ունուցառտ մուշկ ու ամպար:

Դու ի դրախտէն մեզ արմազան,  
Ի յկարաչէն պարգեւեցար.  
Հոտով անուշ, գունով պայծառ,  
Մարդ քո սիրովն յագեցնայր:

Անմահութեան պտուղ դու ես,  
Որ աշխարհիս մէջն բուսար.  
Զքեզ հրեշտակն երեք Նայի,  
Որ աջ պտղովդ ուրախանայր:

Զքեզ քաղեն, տանին հնձան,  
Ճմլեն զքեզ ու տան յիրար.  
Վարդի նման ջուր կու բխես,  
Գետի նման յորդոր գնաս:

Տանին լնուս գգեզ կարաս,  
Առանց կրակի քա ինչ գայ.  
Շատ քաղաւորք ժողովին առ քեզ,  
Մեծ-մեծ իշխանք եւ հուճմարարք:

Զքաղաւորացն սիրտն բանաս,  
Եւ տէր առնես քաղքի հազար.  
Թէ ունէիր հազար չարկամ,  
Նա քո սիրովն մոռանար:

Թէ բարկացեր լինի մարդոց,  
Կամ խոցել գինքն դիժար,  
Յորժամ խմէր կաթ մի քենէ,  
Բաշխէր զամէնն եւ հաշտեցնայր:

Յորժամ խմէ աղփատն ի քեն,  
Որ գեացն եւ զջուրն մուրանայր,  
Նա եւ լինի տէր աշխարհիս,  
Արարածացս պատուպար:

Յորժամ խմէ կայրն ի քենէ,  
Որ ի մօրէն ծներ խաւար,  
Հանց քաղաքաց տայր մեկնաւթիւն,  
Որ չէ տեսեր, չունի խաղար:

Փեհիլեի (Իրան)

Յորժամ խմէ մումնն ի քենէ,  
Որ ի լեզուէն քամ աւ տկար.  
Զերթ գոթաւակն առնու լեզուն,  
Մասխարանայ քան գդիւտհար:

Զեռօքն աւրբ քահանայից,  
Պատարագիս յամէն տաճար.  
Դու հիւանդաց լինիս քծիշկ,  
Մեղաւորացն քաւարար:

Զքեզ տանին զեղ եւ ի քաղաք,  
Վանք եւ անապատ եւ յազարակ.  
Այն տեղն, որ դու չի գտնուիս,  
Ո՛չ ժամ լինի, ո՛չ պատարագ:

Ո՛վ Սարկաւազ Բերդակցի,  
Դու ի գինւոյն ի՞նչ շահեցար.  
Այնչափ ունիս սէր հետ գինւոյ,  
Որ գովեցեր սրտովդ յօժար:

Գէմ ես չունիմ գինւոյ կարիք,  
Եւ քաժակին եմ խզմաք-քեար.  
Ես գրաժակն գովեցի,  
Որ մեր հոգւուն է լուսարար:

1630 թուականի ձեռագիր մատենում  
ընդօրինակուած այս տաղն ընդգրկում է  
338 երկար տարիների պատմութիւն եւ բա-  
նաւէր կոստանեանի 1617 թուականի ձե-  
ռագիր տաղարանից հրատարակած տաղից  
չափ քիչ տարբերութիւն ունի: Այդ հան-  
գամանքն էլ հաստատում է ոտանաւորի  
հարազատ կերպարանքը:

ԱՐԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ